12.7.1 Բողոքի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացներում գնումների բողոքարկման խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ներկայացուցիչը:

12.8 Բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան քսան օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

12.9 Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝

1) որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ գնումների ընթացակարգը կամ Պատվիրատուի, հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ:

2) դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում Պատվիրատուի կամ հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ սույն մասի 8.9 կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

3) չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը՝

ա. եթե պատվիրատուն պայմանագիրը կնքել է առանց Օրենքի պահանջների համաձայն պայմանագրի մասին ծանուցում հրապարակելու,

բ. Օրենքի 9-րդ հոդվածի կամ սույն մասի 12.17 կետի պահանջները խախտելու դեպքում, եթե նման խախտումը զրկել է շահագրգիռ մասնակցին նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է պետական գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագիր կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա:

4) եթե, սույն մասի 12.6 կետի պահանջներին հակառակ, հանձնաժողովը բոլոր համապատասխան փաստերը քննելուց հետո գտնում է, որ ընդհանուր գերակա շահերը պահանջում են ուժի մեջ թողնել պայմանագիրը, ապա կիրառում է այլընտրանքային պատժամիջոցներ՝

ա. պայմանագրի կատարման սահմանափակումը՝ դրա կատարման ժամկետը կրճատելու միջոցով, և (կամ)

բ. Պատվիրատուի հանդեպ պայմանագրի գնի առավելագույնը 10 տոկոսի չափով տուժանքի կիրառում:

5) բոլոր այն դեպքերում, երբ սույն մասի 3-րդ ենթակետով նախատեսված չեղյալ հայտարարելու պատժամիջոցը չի կարող ունենալ հետադարձ ուժ (քանի որ անհնար է վերացնել կատարված պայմանագրային պարտավորությունները), հանձնաժողովը, ի հավելումն, կիրառում է սույն մասի կետի 4-րդ ենթակետի «ա» մասով նախատեսված պատժամիջոցը:

6) հայտարարելու Պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո: Նման որոշումը հիմք է հանդիսանում դատական կարգով ներկայացվելիք վնասի փոխհատուցման հայցի համար:

7) որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

12.10 Գնումների բողոքարկման խորհրդի կողմից բողոքը բավարարվելու դեպքում Պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոքը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար:

12.11 Բողոքի բանավոր քննությունը բաց է հանրության համար և բողոքը ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում այդ մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:

12.12 Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք: Օրենքի 48-րդ հոդվածի համաձայն բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

12.13 Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն այն կայացնելու օրվանից՝ 5 օրացուցային օրվա ընթացքում, հրապարակվում է տեղեկագրում և ուղարկվում է պատվիրատուին, լիազորված մարմին ու բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերին:

12.14 Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել Պատվիրատուի, հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կատարած խախտման հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

12.15 Խորհուրդը կայացնում է բողոքը ներկայացրած անձի պահանջած ժամանակավոր միջոցը կիրառելու մասին որոշում, եթե նման միջոցը պատշաճ և անհրաժեշտ է ակնկալվող վնասը մինչև բողոքի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը կանխելու համար:

12.16 Խորհուրդը հաշվի է առնում ժամանակավոր միջոցի հնարավոր հետևանքները բոլոր այն շահերի, այդ թվում՝ հանրային շահի համար, որոնք կրելու են վնասներ, և կարող է կայացնել նման միջոց չկիրառելու մասին որոշում, եթե դրա բացասական հետևանքները կարող են գերազանցել օգուտը: Ժամանակավոր միջոց չկիրառելու մասին որոշումը չի կարող ազդել նման միջոցի դիմած անձի որևէ այլ հայցի վրա:

12.17 Բողոքը ինքնաբերաբար չի կասեցնում պայմանագրի կնքման ընթացակարգը, սակայն մինչև խորհրդի կողմից սույն հրավերի 12.15-րդ կամ 12.16-րդ կետերով նախատեսված որոշման ընդունումը Պատվիրատուն իրավունք չունի պայմանագիր կնքելու:

ՄԱՍ II
Հ Ր Ա Հ Ա Ն Գ
Բ Ա Ց Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ Ի Հ Ա Յ Տ Ը Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ե Լ ՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Հայտերը (ներառվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ սույն հրահանգի 3.2 կետում նշված դեպքերի) պետք է կազմված լինեն հայերեն:

Գնումների բազային միավորի հիսնապատիկը գերազանցող գնումների դեպքում, (եթե նախատեսվում է սույն հրավերով) հայտերը հայերենից բացի կարող են ներկայացվել նաև անգլերեն և (կամ) ռուսերեն:

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել հայտ:

Հայտը սույն հրավերով նախատեսված կարգով սույն ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող անձի կողմից նախապատրաստված և Պատվիրատուին ներկայացված գնման առարկայի վերաբերյալ առաջարկն է, որը ներկայացվում է ընթացակարգին մասնակցելու դիմումով՝ (Հավելված 1), որում պարտադիր է նշել Մասնակցի հարկ վճարողի հաշվառման համարը, էլեկտրոնային փոստի հասցեն:

2.2 Մասնակիցները հայտով ներկայացնում են՝

2.2.1 <<Մասնակցության իրավունքը>> չափանիշի՝ սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություն իր իսկ կողմից հաստատված՝ ստորագրված և կնքված այն մասին, որ Մասնակիցը՝

1) դատական կարգով սնանկ ճանաչված չէ,

2) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) որի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) ներառված չի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

5) չունի գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

Նշված հայտարարության առաջարկվող ձևը և դրա նկատմամբ առաջադրվող պահանջները ներկայացված են սույն հրավերի N 2 հավելվածում:

Եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է սույն կետով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին: Բացի հայտարարությունից, սույն կետով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով Մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապացուցվել է Մասնակցի՝ գնումների գործընթացում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման դրսևորման փաստը, ապա տվյալ Մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.2.2 Հայտարարություն՝ մասնագիտական փորձառության մասին

1) (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող¹⁰:

3) Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են սույն հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները հետևյալն են՝ *պայմանագիրը գնահատվում է համանման (նմանատիպ), եթե ներկայացվող պայմանագրով սպասարկված լինի այնպիսի գլոբալ համակարգչային ցանց (WAN), որը Հայաստանի բոլոր մարզերում ունի գումարային առնվազն 710 կետ (օգտագործող), որից առնվազն 400-ը՝ գյուղական համայնքներում, առնվազն 710 տեղային ցանց, առնվազն 45 ռադիոմոդեմային 802.11b միացման հանգույց (Access Point), ներառի առնվազն 8000 համակարգիչների ծրագրային սպասարկում:*

Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ Մասնակցի:

2.2.4 Հայտարարություն (Հավելված N 3.3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին, այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող:

2.2.5 Հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.4) այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

Այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող:

2) եթե Մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ Մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.5) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին, այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող¹¹:

2.2.6 Հայտարարություն (Հավելված N 3.6) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին, այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող:

2.2.7 գնային առաջարկ, որը ներկայացվում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում (Հավելված N 4),

2.2.8 հայտի ապահովում՝ տուժանքի ձևով (Հավելված N 9):

2.2.9 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրը իրականացվելու է գործակալության միջոցով.

¹⁰ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա սույն կետը հրավերից հանվում է:

¹¹ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերը հրավերից հանվում են:

2.2.10 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե Մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)¹²:

3. ԱՌԱՋԻՆ ՏԵՂԸ ԶԲԱՆԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

3.1 Սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու համար առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է

ա) նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենը, ընդ որում՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը¹³:

բ) այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք Մասնակիցը նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ (Հավելված N 5.1): Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները¹⁴:

գ) տեղեկանք՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին (Հավելված N 5.2): Նշված տեղեկանքին անհրաժեշտ է կցել հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) աշխատանքային գրքույկի, ինքնակենսագրականի (CV)՝ մասնագետի ստորագրությամբ պատճենները¹⁵:

3.2 Հայտում ներառվող՝ դիպլոմների պատճենները, տրանսպորտային միջոցների, տեխնիկական միջոցների, սարքերի, սարքավորումների վերաբերյալ փաստաթղթերը, որոնք տրամադրվել են խորհրդային ժամանակաշրջանում կամ հետխորհրդային ժամանակաշրջանում՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից, կարող են կազմված լինել ռուսերեն լեզվով, եթե դրանք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ուժը կորցրած չեն ճանաչվել (համարվել):

3.3 Հայտում ներառված բոլոր կնքված փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կնքողի կողմից:

3.4 Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

¹² Համապետել գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ Մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, բացառությամբ որակավորման չափանիշներին վերաբերող փաստաթղթերի, որոնք հաստատվում են կոնսորցիումի առանձին անդամների կողմից՝ համաձայն կոնսորցիումի պայմանագրով տվյալ անդամի սրանձնած պարտավորության:

¹³ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա սույն կետը հրավերից հանվում է:

¹⁴ Եթե <<Տեխնիկական միջոցներ>> որակավորման չափանիշի մասով չեն սահմանվում համապատասխան պահանջներ, ապա սույն կետը հրավերից հանվում է:

¹⁵ Եթե <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշի մասով չեն սահմանվում համապատասխան պահանջներ, ապա սույն կետը հրավերից հանվում է:

4. ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ

4.1 Առաջարկվող գինը ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

4.2 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում՝ Մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

4.3 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով¹⁶:

5. ՀԱՅՏԵՐԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Հայտը փաստաթղթային ձևով ներկայացնելու դեպքում Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը, ինչպես նաև սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը /տեղեկությունները/, կազմվում են բնօրինակից /բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և 1 օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են <<բնօրինակ>> և <<պատճեն>> բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ Մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

5.2 Սույն հրահանգի 5.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

ա) Պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) բաց ընթացակարգի ծածկագիրը.

գ) <<բացել մինչև հայտերի բացման նիստը>> բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

5.3 Սույն հրահանգի 5.1 և 5.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

¹⁶ Սույն կետը սահմանվում է հրավերով, եթե պայմանագրի գինը կայուն է:

Հավելված 1
«ԿՏԱԿ-ԲԸԾՁԲ-15/1» ծածկագրով
բաց ընթացակարգի հրավերի

«ԿՏԱԿ-ԲԸԾՁԲ-15/1» ծածկագրով
բ ա ց ը ն թ ա ց ա կ ա ր գ ի գ ն ա հ ա տ ո ղ հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո Վ ի ն

Դ Ի Մ ՈՒ Մ
Բ Ա Ց Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ Ի Ն Մ Ա Ս Ն Ա Կ Ց Ե Լ ՈՒ

_____ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
<<Պատվիրատուի անվանումը>>-ի կողմից «ԿՏԱԿ-ԲԸԾՁԲ-15/1» ծածկագրով հայտարարված բաց ընթացակարգի
..... չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը
համապատասխան ներկայացնում է հայտը և համաձայն է սույն հրավերի 7.5 կետի 1-ին
ենթակետով նախատեսված հարցումը և դրա հետ կապված՝ գնումների մասին << օրենսդրությամբ
նախատեսված գործողություններն իրականացնելու համար:

_____ -ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող
կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է,
բացառությամբ՝

- 1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
- 2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____ -ի հարկ վճարողի հաշվառման համարն է՝ <<Մասնակցի հարկ վճարողի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
հաշվառման համար>>:

_____ -ի էլեկտրոնայանին փոստի հասցեն է՝ <<Մասնակցի էլեկտրոնային փոստի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
հասցե>>:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԻՐ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

_____ -ն հայտնում և հավաստում է, որ
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
հայտը ներկայացնելու օրվա դրությամբ.

1) դատական կարգով սնանկ ճանաչված չէ,

2) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և
պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) <<_____>>-ի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի
եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված
հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը
օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) <<_____>>-ն ներառված չի գնումների գործընթացին
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

5) բացակայում է գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային
համաձայնություն,

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

«ԿՏԱԿ-ԲԸԾՁԲ-15/1» ծածկագրով
բաց ընթացակարգի հրավերի

«ԿՏԱԿ-ԲԸԾՁԲ-15/1» ծածկագրով
բ ա ց ը ն թ ա ց ա կ ա ր գ ի գ ն ա հ ա տ ո ղ հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո Վ ի ն

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույնով _____-ն հայտնում և հավաստում է, որ բաց
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների
ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է _____ որի
ընդհանուր

(համանման (նմանատիպ) պայմանագրի(երի) անվանումը(ները))

արժեքը կազմել է
ՀՀ դրամ և պարտավորվում է սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել
հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

*Ընդ որում դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ
հանրագումարային ծավալը)¹ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի
շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ
պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ,
պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի
քսան տոկոսից:*

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

¹⁷ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի
գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, սույն հավելվածը հրավերից հանվում է:

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով _____-ն հայտնում և հավաստում է, որ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և այդ տեխնիկական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

_____ն և պարտավորվում է սույն հրավերով սահմանված

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը¹⁸:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

¹⁸ Սույն նախադասությունը հրավերից հանվում է, եթե <<Տեխնիկական միջոցներ>> որակավորման չափանիշի մասով չեն սահմանվում համապատասխան պահանջներ:

«ԿՏԱԿ-ԲԸԾՁԲ-15/1» ծածկագրով
բաց ընթացակարգի հրավերի

«ԿՏԱԿ-ԲԸԾՁԲ-15/1» ծածկագրով
բ ա ց ը ն թ ա ց ա կ ա ր գ ի գ ն ա հ ա տ ո ղ հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի ն

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով _____-ն հայտնում և հավաստում է, որ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հայտը ներկայացնելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ
ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային
արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

¹⁹ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա սույն հավելվածը հրավերից հանվում է և հրավերով մասնակիցներից պահանջվում է ներկայացնել միայն 3.5 հավելվածը՝ վերջինից հանելով բացառությունը (footnote):

«ԿՏԱԿ-ԲԸԾՁԲ-15/1» ծածկագրով
բաց ընթացակարգի հրավերի

«ԿՏԱԿ-ԲԸԾՁԲ-15/1» ծածկագրով
բ ա ց ը ն թ ա ց ա կ ա ր գ ի գ ն ա հ ա տ ո ղ հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո Վ ի ն

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով _____-ն հայտնում և հավաստում է, որ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ և այդ ֆինանսական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

²⁰ Եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է սույն հավելվածը,

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով _____-ն հայտարարում և հավաստում է, որ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներ և այդ աշխատանքային ռեսուրսներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը և պարտավորվում է սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

_____ -ն և պարտավորվում է սույն հրավերով սահմանված
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը²¹:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

²¹ Սույն նախադասությունը հրավերից հանվում է, եթե <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշի մասով չեն սահմանվում համապատասխան պահանջներ:

«ԿՏԱԿ-ԲԸԾՁԲ-15/1» ծածկագրով
բ ա ց ը ն թ ա ց ա կ ա ր գ ի գ ն ա հ ա տ ո ղ հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի ն

Գ Ն Ի Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ԿՏԱԿ-ԲԸԾՁԲ-15/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,

_____ -ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)

Չափա- բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6=3+4+5
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>				
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>				
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>				
...	...				
...	...				

***Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 5-րդ սյունակում:**

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

«ԿՏԱԿ-ԲԸԾՁԲ-15/1» ծածկագրով
բաց ընթացակարգի հրավերի

«ԿՏԱԿ-ԲԸԾՁԲ-15/1» ծածկագրով
բ ա ց ը ն թ ա ց ա կ ա ղ ա ղ ի գ ն ա հ ա տ ո ղ հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո Վ ի ն

Կից Ձեզ եմ ներկայացնում _____-ի՝ «ԿՏԱԿ-ԲԸԾՁԲ-15/1»
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու հրավերով նախատեսված՝
որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով
նախատեսված փաստաթղթերը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

“ԿՏԱԿ-ԲԸԾՁԲ-15/1» ծածկագրով
բաց ընթացակարգի հրավերի

“ԿՏԱԿ-ԲԸԾՁԲ-15/1» ծածկագրով
բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ (ՍԱՐՔԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ) ՄԱՍԻՆ

N ը/կ	Տեխնիկական միջոցի (սարքի, սարքավորման տեսակը)	Տեխնիկական միջոցի (սարքի, սարքավորման) մակնիշը, պետհամարանիշը (եթե առկա է) և արտադրության տարեթիվը	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը

- Կից ներկայացնում ենք տեխնիկական միջոցների տեխնիկական անձնագրերի և
այդ միջոցների նկատմամբ Մասնակցի սեփականությունը կամ ժամանակավոր
օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերի պատճենները:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

²² Եթե <<Տեխնիկական միջոցներ>> որակավորման չափանիշի մասով չեն սահմանվում համապատասխան պահանջներ, ապա
սույն հավելվածը հրավերից հանվում է:

«ԿՏԱԿ-ԲԸԾՁԲ-15/1» ծածկագրով
բաց ընթացակարգի հրավերի

«ԿՏԱԿ-ԲԸԾՁԲ-15/1» ծածկագրով

բ ա ց ը ն թ ա ց ա կ ա ր գ ի գ ն ա հ ա տ ո ղ հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո Վ ի ն

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿՆՔՎԵԼԻՔ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՍՆԱԳՑԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

N	Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
	Անունը, Ազգանունը	Որակավորումը	Աշխատանքային փորձը		Գործատուի անվանումը
			Ժամանակահատվածը	Գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5	6
1.					
2					
.					
3					
.					
..					
.					
..					
.					

Կից ներկայացնում ենք _____

(հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատված գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) աշխատանքային գրքույկի, ինքնակենսագրականի (CV)՝ մասնագետի ստորագրությամբ պատճենները:)

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

²³ Եթե <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշի մասով չեն սահմանվում համապատասխան պահանջներ, ապա սույն հավելվածը հրավերից հանվում է:

**«2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՑԱՆՑԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ»
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԿՏԱԿ-ԲԸԾՁԲ-15/1»**

ք. Երևան

«<__>> _____ 20 թ.

«<_____>>, ի դեմս ----- յանի, որը գործում է -----
----- կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և -----ն, ի դեմս
Ընկերության տնօրեն -----ի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն
պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «2016 թվականին
Հայաստանի կրթական ցանցի (ՀԿՑ) սպասարկում» ծառայության մատուցման պարտավորությունը
(այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով
սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված
Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Պետք է պահպանվեն Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով առաջադրված
բոլոր պայմանները, այդ թվում՝

- ուսումնական հաստատություններին պետք է տրամադրվի էլեկտրոնային փոստ,
- հնարավորինս պետք է արգելափակվի բռնություն, սեռական սանձարձակություն
պարունակող տեղեկատվությունը,
- Պատվիրատուին պետք է տրամադրվեն վիճակագրական տվյալներ ըստ կողմերի միջև
նախապես համաձայնեցված ժամանակացույցի և/կամ Պատվիրատուի առանձին հարցումների
դեպքում:

2.2 Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պայմաններին
անհամապատասխան մատուցված Ծառայության ընդհատումների ընդհանուր տևողությունը մեկ ամսվա
ընթացքում յուրաքանչյուր ուսումնական հաստատության համար չպետք է գերազանցի 24 ժամը:

2.3 ՀԿՑ-ի կենտրոնական և մարզային հանգույցները, ուսումնական հաստատությունների
կապի սարքավորումները, ինչպես նաև ուսումնական հաստատությունների տեղային ցանցի
համակարգիչների ծրագրային ապահովումը պետք է պահպանվեն աշխատունակ վիճակում:

Ուսումնական հաստատություններին պետք է տրամադրվի «թեժ գիծ» հեռախոսային
խորհրդատվություն:

Ծառայության մատուցման պայմաններից ելնելով Պատվիրատուն Կատարողին կարող է
տրամադրել ինտերնետային ցանցի սպասարկման համար անհրաժեշտ համակարգչային
սարքավորումներ, որոնք նշված են Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում:

ՀԿՑ-ի կենտրոնական հանգույցի սպասարկումը/կառավարումը պետք է իրականացվի
Պատվիրատուի գրասենյակից: Կենտրոնական հանգույցի սպասարկման/կառավարման նպատակով
Պատվիրատուն Կատարողի մեկ աշխատակցի համար իր գրասենյակում պետք է ստեղծի անհրաժեշտ
աշխատանքային պայմաններ (Պատվիրատուի աշխատանքային օրվա ընթացքում): Կատարողը պետք է
ստեղծի Պատվիրատուի աշխատակիցների համար ցանցի սպասարկման աշխատանքներին հետևելու և

ՀԿՑ-ի սպասարկման/կառավարման համար անհրաժեշտ փորձառություն ձեռք բերելու հնարավորություն:

Պատվիրատուն և Կատարողը, ելնելով ՀԿՑ-ի անխափան աշխատանքն ապահովելու անհրաժեշտությունից, պետք է նպաստեն իրենց համապատասխան աշխատակիցների (այդ թվում՝ մարզային աշխատակիցների) փոխադարձ կապին, նրանց միջև տեղեկատվության արագ և անմիջական փոխանակմանը:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Չվճարել անպատշաճ որակի (ծավալի) մատուցված Ծառայության յուրաքանչյուր օրվա համար և Կատարողից պահանջել Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը:

Անպատշաճ որակի (ծավալի) է համարվում մատուցված Ծառայությունը, երբ Կատարողի մեղքով այն Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պայմանների պահպանմամբ մատուցվել է Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ծավալի (1422 ուսումնական հաստատություն) 20 տոկոսից (285 ուսումնական հաստատություն) պակաս ծավալով:

3.1.2 Միակողմանի լուծել Պայմանագիրը, հրաժարվել Ծառայությունից և պահանջել Կատարողից վճարել Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև հատուցել իր կրած վնասները, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

3.1.3 Կատարողի կողմից Պայմանագրի խախտումն էական է համարվում, եթե մեկ ամսվա ընթացքում 10 օրից ավելի Կատարողի մեղքով մատուցվել է անպատշաճ որակի Ծառայություն:

3.1.4 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը էապես խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով ձեռք է բերել Ծառայություն Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ծառայությունն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

3.1.5 Կատարողի կողմից Պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Կատարողից պահանջել հատուցելու հրաժարման հետևանքով պատճառած վնասը:

3.1.6 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը, հայտնել իր կարծիքը տվյալ փուլում կատարվող աշխատանքների մասին, ներկայացնել առաջարկություններ, որոնք չեն հանգեցնի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված պայմանների փոփոխմանը:

3.2 Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

3.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.3 Կատարողն իրավունք ունի՝

3.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4 Կատարողը պարտավոր է՝

3.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

3.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.3 Ծառայությունն ամբողջովին մատուցելուց հետո ներկայացնել Ծառայության մատուցման մասին ամփոփ հաշվետվություն:

3.4.4 Հաշվի առնել Պատվիրատուի կարծիքը Ծառայության մատուցման տվյալ փուլում մատուցվող Ծառայության մասին, քննարկող ներկայացված առաջարկությունները և իրագործել դրանք, եթե այդ առաջարկությունները չեն հանգեցնում Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների փոփոխմանը:

3.4.5 Պատվիրատուի հանձնարարությամբ փոխարինել ուսումնական հաստատությունների կապի սարքավորումները՝ անսարք սարքավորումը նորով, կամ աշխատունակը առավել որակյալ կապ ապահովող սարքավորումով փոխարինելու նպատակով: Կապի նոր սարքավորումը Կատարողին տրամադրում է Պատվիրատուն:

3.4.6 Պատվիրատուի առաջարկով, իր հնարավորության սահմաններում, իր միջոցներով և իր հաշվին, փոխարինել ՀԿՑ-ի վնասված սարքավորումները մինչև Պայմանագրի 3.4.5 կետով, նախատեսված կարգով սարքավորումներ ստանալը:

3.4.7 Պայմանագրի 3.1.1 կետով նախատեսված հիմքերով Պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

3.4.8 Ծառայության մատուցման ժամկետի ավարտից հետո ՀԿՑ-ը Պատվիրատուին հանձնել աշխատանքային և աշխատունակ վիճակում, օժանդակել Պատվիրատուին՝ հաջորդ կազմակերպությանը ՀԿՑ-ն սպասարկման հանձնելու գործընթացում:

3.4.9 Պայմանագրի կատարման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 7 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Ծառայության հանձնումը և ընդունումը կատարվում է յուրաքանչյուր ամիս Պատվիրատուի և Կատարողի միջև արձանագրություն ստորագրելու միջոցով: Ծառայությունը համարվում է մատուցված՝ Պատվիրատուի և Կատարողի կողմից վերոնշյալ արձանագրությունը երկկողմ վավերացնելուց հետո: Ծառայության ամբողջ ծավալով մատուցումից հետո ստորագրվում է Ամփոփիչ հանձնման-ընդունման արձանագրություն և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից երկու աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

4.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգ աշխատանքային օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Ծառայության հանձնումը և ընդունումը կատարվում է յուրաքանչյուր ամիս Պատվիրատուի և Կատարողի միջև արձանագրություն ստորագրելու միջոցով: Ծառայությունը համարվում է մատուցված՝ Պատվիրատուի և Կատարողի կողմից վերոնշյալ արձանագրությունը երկկողմ վավերացնելուց հետո: Ծառայության ամբողջ ծավալով մատուցումից հետո ստորագրվում է Ամփոփիչ արձանագրություն:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

5.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է _____ (_____ տառերով) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ, համապատասխանաբար Ծառայության մեկ ամսվա գինը կազմում է _____ (_____ տառերով) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ, իսկ մեկ ուսումնական հաստատության մեկ ամսվա սպասարկման գինը կազմում է _____ (_____ տառերով) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր այլ ծախսերը: Պայմանագրի գինը ներառում է նաև ՀԿՑ-ի կենտրոնական և մարզային հանգույցների սպասարկմանն առնչվող՝ տարածքների վարձակալման, տեխնիկական սպասարկման և այլ անհրաժեշտ ծախսերը: Պայմանագրի գինը կնվազի Պայմանագրի 2.2 կետով սահմանված ընդհատումների գումարային տևողությունը գերազանցող ժամաքանակին համապատասխանող գումարի չափով՝ յուրաքանչյուր մեկ ժամի համար 100 (մեկ հարյուր) դրամ: Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվածից պակաս ծավալով մատուցված Ծառայության դիմաց (այցելությունների քանակ, կապի արագություն, պահուստային կապի առկայություն և այլն) Ծառայության մեկ ամսվա գինը կնվազի համապատասխան քանակի ուսումնական հաստատությունների մեկ ամսվա սպասարկման գնի չափով:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով,

իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2016թ. դեկտեմբերի 25-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 5.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել:

իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.4 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում²⁴:

8.5 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները²⁵:

8.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

8.9 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները

²⁴ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

²⁵ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համապեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.10 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«Կրթական տեխնոլոգիաների ազգային

կենտրոն» ՊՈԱԿ

ք. Երևան, Վրացյան 73

Հայէկոնոմբանկ, Սպանդարյան մասնաճյուղ

Հ/Հ 163048288407

ՀՎՀՀ 01550374

Տնօրեն

_____ Ա. Պողոսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

(ստորագրություն)

Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձեռքբերվող ծառայության նկարագիր

Գնման առարկան 2016 թվականին Հայաստանի կրթական ցանցի սպասարկում ծառայությունն է:

2016 թվականի ընթացքում սպասարկվելու է Հայաստանի կրթական ցանցը (այսուհետ ՀԿՑ), որը պայմանականորեն բաժանվում է չորս մասի.

Ա. Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) ենթակառուցվածքին (ԿՏԱԿ-ի կենտրոնական և մարզային կապի հանգույցներին) միացված ուսումնական հաստատություններ (այսուհետ՝ ՀԿՑ Ա մաս)

Բ. Ուսումնական հաստատություններ, որոնք միացված են ՀԿՑ-ին տարբեր ինտերնետ մատակարարների կապուղիներով՝ առանց ԿՏԱԿ-ի մարզային կապի հանգույցներն օգտագործելու (այսուհետ՝ ՀԿՑ Բ մաս):

Գ. «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի պատվերով 2012թ. ստեղծված ցանցում ընդգրկված ուսումնական հաստատություններ (այսուհետ՝ ՀԿՑ Գ մաս),

Դ. Ուսումնական հաստատություններ, որոնք ընդգրկված չեն Ա, Բ, Գ մասերում և որևէ կապի սարքավորում չունեն (այսուհետ՝ ՀԿՑ Դ մաս):

2016 թվականին պետք է սպասարկվի Հայաստանի կրթական ցանցը, որում պետք է ընդգրկված լինեն Հայաստանի 1420 ուսումնական հաստատությունները (այդ հաստատությունների տեղային համակարգչային ցանցերում ընդգրկված համակարգիչները): ՀԿՑ-ում, ինչպես նաև ՀԿՑ կառավարող օղակներում պետք է ապահովվի տեղեկատվության անընդհատ, չսահմանափակված ծավալով հոսքը, ինչպես նաև ինտերնետ կապը: Ուսումնական հաստատությունների ելքը դեպի ինտերնետ պետք է ապահովվի մեկ կենտրոնից՝ ՀԿՑ կենտրոնական հանգույցից:

Հայաստանի կրթական ցանցի բաղկացուցիչներն են՝

- կենտրոնական հանգույցը,
- մարզային հանգույցները,
